№ 99 Յունիսի 13 (25) **1880** Յունիսի 13 (25) № 99

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական թատրոնի գործը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Բաքուից։ Նամակ Նոր-Բայազէտից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիական պարլամենտը։ Թիւրքիա։ Բերլինի կոնֆերէնցիա։ Նամակ Թիւրքիայից։—Բայտարարութիւններ։

ՏԵՂԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

—

Յունիսի 11-ին մենք ներկայ գտնվեցանք Աշտարակի թատրոնում վրաց մշտական խմբի ներկայացմանը։ Խաղում էին Ա. Ծերետէլիի «Կինտո» պիէսան։

Մենք նպատակ չունենք քննել այստեղ պիէսայի բովանդակութիւնը, ցոյց տալ նրա արժանաւորութիւններն ու պակասութիւնները, միայն այսքան կասենք, որ ընդհանուր տպաւորութիւնը, որ մենք դուրս բերեցինք ներկայացումից, շատ գոհացուցիչ էր։

Հասարակութիւնը, մանաւանդ երեսուն կապէկանոց տեղերի հասարակութիւնը, հասարակ մարդիկ, մեծ զուարճութիւն էին գտնում բեմի վրա իրանց ծանօթ տիպերը տեսնելու, իրանց համար հասկանալի, մատչելի լեզուն, իրանց որտին մօտիկ գաղափարներ դերասանների բերանից լսելու։ Երևում էր որ պիէսան, տեղական կեանքից վերցրած լինելով, մեծ ընդունելութիւն էր գտնում հանդիսականների մէջ....

Միայն այդ տեսակ կենդանի, մեր սեփական կեանքից վերցրած պիէսաները ճշմարիտ կրթիչ ներգործութիւն կարող են ունենալ հասարակութեան մեծամասնութեան վրա։

Կամայ մենք սկսեցինք համեմատել մեր մտքում այդ տեսակ պիէսայի բեմի վրա երևալու ներգործութիւնը, այն մեռցնող, քընացնող ներգործութեան հետ, որ ունէր մեր հասարակութեան վրա այս տարվայ հայոց մշտական խմբի բէպերտուարը, իր «Լիսի Դիդիէ», իր «Մեր առանց համարման» և ուրիշ այդ տեսակ պիէսաներով, որոնց կեանքը, տիպերը, շարժվածքները, գաղափարները, նոյն իսկ խօսակցութեան ոճը և ձևը մեզ կատարելապէս խորթ են։

Մինչև որ վրաց թատրոնական խումբը աշխատում է տեղական կեանքից, ինքնուրոյն պիէսաներ ներկայացնել, հայոց թատրոնական կոմիտէտը, մեր կովկասեան կեանքը, մեր ներքին հասարակական խնդիրները թողնելով, բերել է տուել Կ. Պոլսից ֆրանսիական բէպերտուարի ամենահնացած պիէսաներ խաղացող դերասաններ, իրանց անհամ բէպերտուարի հետ միասին....Հասարակութիւնը ներկայ է գտնվում ներկայացումներին և ոչինչ չէ հասկանում խաղացած պիէսայից։ Կ. Պոլսի լեզուն, օտար կեանք, օտար և անբնական տիպեր,—ամէն բան խորթ է նրա համար, ոչ մի խօսք, ոչ մի գաղափար, ոչ մի շարժվածք հանդիսականի սրտին և ուղեղին մատչելի չէ։ Հասկանալի է որ այդ տեսակ թատրոնական ներկայացումներ ոչինչ կրթողական ներգործութիւն չեն կարող ունենալ կովկասեան հայի վրա։

Մեր թատրոնական կոմիտէտը հարկաւորութիւն չունէր շտապելու. կարող էր մի ամբողջ տարի սպասել, պատրաստել բէպերտուար, մեր եղած բէպերտուարը հաւաքել յորդորել տեղական հեղինակներին, որ նրանք գրեն տեղական կեանքից վերցրած ինքնուրոյն պիէսաներ, վրաց լեզուից էլ թարգմանել մի քանի գրուածներ, հաւաքել դաւառներում ցիր ու ցան եղած գրողներից իրանց հեղինակութիւններ,—և ապա, մի տարուց յետոյ հանդէս դուրս գալ տեղական պատրաստ բէպերտուարով։

Բայց մեր թատրոնական գործի ղեկավարները ոչ այն ժամանակ կամեցան լսել և հասկանալ մեր միտքը, որ արդէն շատ անգամ յայտնած էինք, ոչ էլ այժմ դառն փորձերից յետոյ խրատվեցան....

Լսում ենք որ կոմիտէտի երկու անդամներից մինը գնացել է Կ. Պոլիս, կրկին այնտեղից մի քանի դերասաններ և դերասանուհիներ հրաւիրելու համար։

Ուրեմն եկող սեզոնին մենք կրկին պատիւ կունենանք տեսնել մեր բեմի վրա Կ. Պոլսի լեզուով խօսող զանազան ֆրանսիացի մարդիկներ, դուքսեր, կոմսուհիներ և այլն....

Այդպէս է առաջնորդում մեզ մեր ինտելիգէնցիան և այսպէս աննպատակ, անիմաստ կերպով վատնում է հասարակական փողերը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 8-ին

Անողոք սովը դեռ չէ դադարում իր մահատարած գերանդին մեր թշուառ եղբայրակիցներով անկուած զաւակի վրա չարժելուց, դեռ չէ կշտանում անողորմ մահ սփռելուց առանց այն էլ դարերի ընթացքում չատ տանջանքների տակ ճնչված ու մաչված թիւրքաց Հայաստանի, մանաւանդ Վասպուրականի վրա, որը ներկայումս այնպիսի մի սրտաճմլիկ դրութեան մէջ է, որ միայն արդարն անդգմանները և անսիրտները սառնասրտութեամբ կը նայեն նրա վրա, մարդկային փափուկ զգացմունքներից զուրկ անհատները ցուրտ անտարբերութեամբ կը նայեն այն սնափոր գերեզմանին, որ սովն է քանդում վատաբաղդ մեր եղբայրակիցներին յատկեան կլանելու համար...

Թիրղը, փափուկ զգացմունքը, մարդասիրութիւնը մեռած են բոլորովին այն հարուստների սրտերում, որոնցից չատ սահմանափակ թիւը իր մի չարժմունքով կարող էր փրկութեան լոյս ծագել մահաբեր մրրիկներով փոթորկած Վասպուրականի հորիզոնի վրա. իսկ ընդհակառակը այդ վեհ չատկութիւնները, կարծես, արձուն են այնպիսիների մէջ, որոնք ունեն ցանկութիւն, կամք, բայց, տակդ, չունեն մէջից սովի այդ սոսկալի պատուհասի դէմ դիմադրելու....

Թող սովակատաղ հայրը իր սիրասուն որդու մուն ուսի, թող թէկուզ ողջ Վասպուրականը սովամահ լինի, միայն թէ մեր ազատերի ծանգոտ սրտերի մէջ թաղված կռպէկները՝ ծանգոտ տիրոջ հետ անբաժան մնան....

Այդ անգոր ու տկար օգնականներից մինն էլ այսօր Երևանի Գայիանեան ուսումնարանն է դառնում, որ չտապում է իր ամենայնչին լումայ գցել Վասպուրականի հայութիւնը ապրեցնելու գանձանակում։

Ուրեմն, մեծարգոյ խմբագիր, լիայոյս եմ որ քաջալեր նեղութիւն անձին կը համարէք սորա մէջ ներփակուած մի հարիւր և եօթն ռուբլի, որ կամաւորապես հանգանակվեց մեր ուսումնարանում՝ հասցնել ուր հարկն է։ Ահա նուիրատու հոգաբարձուհիների, տեսչի, օր. օգնականուհիների, ուսուցիչների և աշակերտուհիների ցուցակը. Ս. Մաղաքեանց 3 ր., Ա. Թաքիրեանց 10 ր., Ա Եղիազարեանց 3 ր., Ց. ա. ք. Մելիանց 10 ր., օր. Ս. Ցէր-Աստուածատրեանց 2 ր., օր. փառանձեմ 2 ր. օր. Ե. Ցէր-Պարուբեանց 2 ր., Պ. Ա. Սիմէօնեանց 6 ր., Ա. Մելիանց 3 ր., Ս. Խաչատրեանց 2 ր., Վ. Խուդաթաչեան 10 ր.։ Աշակերտուհիներ. Ն. Ցարոմիրեան 2 ր., քոյրեր Մեհերեանք 2 ր., Մ. Դաղամանց 2 ր., քոյրեր Դաղեանք 2 ր., Զ. Մելեան 1 ր., Բ. Ցէր Խաչատրեան 1 ր., Ե. Պապիկեան 1 ր., Ս. Կարապետեան 1 ր., Շ. Թեոսեան 1 ր., Ա. Գագիկեան 1 ր., Մ. Ցէր-Խաչատրեան 1 ր., քոյրեր Յովհաննիսեանց 1 ր. 50 կ., Ա. Մելիքեան 1 ր., Թ. Աւետիսեան 1 ր., Մ. Արբրահամեան 1 ր., քոյրեր Եղեազարեանք 2 ր., Կ. Պետրոսեան 50 կ., Մ. Ազաչանեան 1 ր., Փ. Գասպարեան 40 կ., Թ. Մելիքեան 2 ր., Ե. Խուդաբաչեան 1 ր., քոյրեր Յորեանք 1 ր., Ե. Ադզարեանց 1 ր., Ա. Պողոսեանց 1 ր., Մ. Պապիկեանց 1 ր., Փ. Ջանիբէգեանց 1 ր., Մ. Թորոսեանեանց 1 ր., քոյրեր Աֆրիկեանք 2 ր., Թ. Վուրբանեան 1 ր., քոյրեր Շահխաթունեանք 2 ր., Պ. Պաչեանց 50 կ., Ս. Ցէր-Գրիգորեանց 1 ր., Զ. Թարգանոսեանց 1 ր., Շ. Դէորգեանց 1 ր., Յ. Յովհաննիսեանց 50 կ., Պ. Քեանդարեանց 40 կ., Ս Քոչարեանց 1 ր., Վ. Պապաջանեան 40 կ., Զ. Յարութիւնեանց 40 կ., Վ. Ղուվասեանց 25 կ., Մ. Վարդանեանց 20 կ., Ս. Մարտիրոսեանց 20 կ., Մ. Թադէոսեան 15 կ., Ի. Գէորգեան 30 կ., Շ. Ազիբէգեան 40 կ., Ա. Ցէր-Ստեփաննեան 20 կ., Թ. Մելքումեան 60 կ., Ե. Սարգսեան 1 ր.։ Աւելացնելով այս ամենի վրա և իմ կողմից 9 ր., ընդամենը ուղարկում եմ մի հարիւր եօթն ռուբլի, զուրս գալով ինձանից կոպէկ մանապարհածախք։

Վարժուհի նոյն ուսումնարանի օր. Եղ. Ալիխանեան

ՆԱՄԱԿ ԲԱԳԻՐԻՑ

—

4 յունիսի

Մի միտք վաղուց է արդէն տանջում էր ինձ, այն է որ մենք աւետարանական հայերս, ստորադրված լինելով Մոսկվայի լութերական, գերմանական կոնսիստորիային, ակամայ ենթարկված ենք նրա անտարբերութեանը դէպի մեր մարդերի լեզուն։ Մինչդեռ այդ միտքը իմ ուղեղիս մէջ ձևակերպվելու և հասունանալու վրա էր, ահա յանկարծ ստացանք «Մշակի» № 82, որի մէջ տպված էր ճնամակ Ս. Պետերբուրգից։

Թէ ով է այդ նամակի հեղինակը, ես չը գիտեմ, միայն կասեմ որ նրա յայտնի միտքը մեր ամենասիրելի մտքերի արձագանգն է կարծես։

Մենք փափագում էինք միշտ մի հայ հովիւ ունենալ, որպէս զի հասկանանք նրա մեզ քարոզածը, որպէս զի մեր զաւակները ուսանեն նրա բերանից կրօնի սկզբունքները իրանց համար հասկանալի, մայրենի, հայոց լեզուով, բայց ահա իմացանք որ կենսատարին ուղարկում է մեզ մի այլազգ հովիւ, մեր զաւակների համար մի այլաբանս վարժապետ։ Մինչև այժմ մենք չունէինք և ոչ մի հովիւ, և ոչ մի վարժապետ. թէ քանի, մեծ մեծ, անդին տարիներ խվիցան մեզանից, քանի ժամանակ մեր զաւակները մնացին բարոյապէս մեռցրած, զուրկ դպրոցական ուսումից և հոգեոր դաստիարակութենից,—պատմել կարելի չէ։ Այդ բոլոր զանցառութիւնները ժամանակով կը միջվեն,

Բայց անկեղծ և պարզ խոսասվանվենք. այս զանցառութիւնների մէջ առաւելապէս մենք ինքներս ենք մեղաւոր։ Մենք երբ թախանձեցինք, երբ խնդրեցինք, երբ բոլոր ջանք գործ դրինք, որպէս զի տան մեզ մի հայազգի հովիւ, մի հայախօս ուսուցիչ։ Երբ մենք նորից ուղեցինք մեզանից մի խնդրատու պատգամաւոր ուղարկել Ս. Պետերբուրգ, որպէս զի բարձրագոյն կառավարութեան առջև ազգասի ներկայացնել մեր ամենախոնարհ խնդիրքը, արդեօք այս մասին շատախուսց մի արձագանք եղաւ. կարծեմ ոչ։ Հարցնենք այդ մասին մեր շատախուս եղբայրներին,

Զը գիտենք Բաքուի համար պատրաստվող պատասխանը ուր մնաց, որ պատասխանը Հիւսիսային մասի խոսաման նայելով պէտք է ապրիլի տեսակ մնէր։ Ահա յանկարծ է և դեռ ոչինչ լուր չունենք նրա գալու մասին։ Ով գիտէ, գուցէ այդ պատասխանն էլ գնացած է Ս. Պետերբուրգ կամ Մոսկվա և այնտեղ կան 1 ր., Ս. կարապետեան 1 ր., Շ. Թեոսեան 1 ր., Ա. Գագիկեան 1 ր., Մ. Ցէր-Խաչատրեան 1 ր., քոյրեր Յովհաննիսեանց 1 ր. 50 կ., Ա. Մելիքեան 1 ր., Թ. Աւետիսեան 1 ր., Մ. Արբրահամեան 1 ր., քոյրեր Եղեազարեանք 2 ր., Կ. Պետրոսեան 50 կ., Մ. Ազաչանեան 1 ր., Փ. Գասպարեան 40 կ., Թ. Մելիքեան 2 ր., Ե. Խուդաբաչեան 1 ր., քոյրեր Յորեանք 1 ր., Ե. Ադզարեանց 1 ր., Ա. Պողոսեանց 1 ր., Մ. Պապիկեանց 1 ր., Փ. Ջանիբէգեանց 1 ր., Մ. Թորոսեանեանց 1 ր., քոյրեր Աֆրիկեանք 2 ր., Թ. Վուրբանեան 1 ր., քոյրեր Շահխաթունեանք 2 ր., Պ. Պաչեանց 50 կ., Ս. Ցէր-Գրիգորեանց 1 ր., Զ. Թարգանոսեանց 1 ր., Շ. Դէորգեանց 1 ր., Յ. Յովհաննիսեանց 50 կ., Պ. Քեանդարեանց 40 կ., Ս Քոչարեանց 1 ր., Վ. Պապաջանեան 40 կ., Զ. Յարութիւնեանց 40 կ., Վ. Ղուվասեանց 25 կ., Մ. Վարդանեանց 20 կ., Ս. Մարտիրոսեանց 20 կ., Մ. Թադէոսեան 15 կ., Ի. Գէորգեան 30 կ., Շ. Ազիբէգեան 40 կ., Ա. Ցէր-Ստեփաննեան 20 կ., Թ. Մելքումեան 60 կ., Ե. Սարգսեան 1 ր.։ Աւելացնելով այս ամենի վրա և իմ կողմից 9 ր., ընդամենը ուղարկում եմ մի հարիւր եօթն ռուբլի, զուրս գալով ինձանից կոպէկ մանապարհածախք։

Վարժուհի նոյն ուսումնարանի օր. Եղ. Ալիխանեան